
ՋԱՎԱԽՔԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ
(Ծննդյան 150-ամյակի առթիվ)

ՄՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժնում վաղուց ի վեր հետազոտական աշխատանքներ են իրականացվում հայ բանագիտության, բանահավաքչության անցած ուղու աստիճանական ձևավորման ու առաջընթացի կայացման որոշակի շրջափուլերի վերաբերյալ: Այդ ուղղությամբ կան հրատարակված մի շարք աշխատություններ՝ ըստ առանձին բանագետ-բանահավաքների: Նմանատիպ մենագրական աշխատությունները հնարավորություն են ընձեռում հետազայում հայ բանագիտության ողջ ընթացքը ճշգրիտ ու համակողմանի լուսաբանելու և գնահատելու:

Ե. Լալայանի բազմաբնույթ գործունեությունը (ազգագրություն, բանահյուսություն, հնագիտություն, մարդաբանություն, վիճագրություն), առ այսօր խորքային ուսումնասիրության չի արժանացել: Մեր նպատակն է ոչ միայն պարզել այն դրդապատճառները, որոնք մղել են նրան՝ ձեռնամուխ լինելու, մասնավորապես, բանահավաքչության ու գրառված նյութերի հրատարակման աշխատանքներին, այլև բացահայտել մշակութային պատմական այն մեծ առաքելությունը, որը ստանձնել ու արժանապատիվ իրականացրել է նա իր ողջ գիտակցական կյանքում: Աշխատանքը կատարվում է հայ բանագիտության մեջ վաղուց իրականացվող նյութերի քանակային վերլուծության մեթոդով: Նրա հրատարակած գրքերում և ձեռագիր ֆոնդերում առկա սկզբնաղբյուրների քանակային հաշվառմամբ, նյութերի աճն ու նվազումը բնութագրող տվյալների, նյութերի աշխարհագրական ծագման, գրառման վայրի, ժամանակի, տեսակների, բնագրերի լեզվի (բարբառային և այլալեզու) վերլուծությամբ կբացահայտվի Ե. Լալայանի բանահյուսական ժառանգության բարդ ու տարողունակ կառուցվածքն ու դրա մշակութային պատմական հույժ կարևոր նշանակությունը: Ի դեպ, բանահյուսության նկատմամբ նրա հետաքրքրությունները ձևավորվել են տակավին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներից: Նա պարբերաբար մասնակցել է արձակուրդների ժամանակ ուսուցիչների կազմակերպած գիտարշավներին, այցելություններին Հայաստանի տարբեր գավառներ: Աշակերտները ծանոթանում էին ժողովրդի նիստուկացին, բառ ու բանին: Հիշյալ մտահղացումը պայմանավորված էր աշակերտներին ազգային մտածողությամբ կրթել-դաստիարակելու, արմատներին հաղորդակից դարձնելու առաքելությամբ: 1885 թ. Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո Ե. Լալայանը մեկնում է Ջավախք՝ դասավանդելու Ախալքալաքի ու Ախալցխայի թեմական դպրոցներում: Մանկավարժա-

կան աշխատանքներին զուգընթաց՝ նա զբաղվում է նաև բանահավաքչությամբ: Ի սկզբանե նրա նպատակն առավելապես պայմանավորված էր սկզբնաղբյուրների գրառման, հրատարակման, կորստից փրկելու անհրաժեշտությամբ: Այդ առթիվ Ե. Լալայանը գրում է. «Ուսումնասիրություններ կատարելու համար երբեք ժամանակ չի պակասելու: Եթե մի քառորդ դար էլ անտարբեր գտնվենք հայկական նյութերը հավաքելու, շատ ու շատ նյութեր բոլորովին անհետանալու են: Ուստի իմ նպատակը ոչ թե ուսումնասիրություն տալն է, այլ եվրոպական ուսումնասիրության լույսով հայկական նյութերը որոնելը, գտնելը, կորստից ազատելը»¹: Նպատակը միանգամայն պարզ է. նոր սկզբնավորվող բանագիտության ընթացքը նա պայմանավորում է նախ՝ բնագրերի գրառման, հրատարակման, այնուհետև հրատարակված նյութերի ուսումնասիրության շրջանակներում: Բանագիտական խնդիրների համակողմանի վերհանման խնդրում Ե. Լալայանը կարևորում է հատկապես բանավոր ավանդության բազմահարուստ շտեմարանի առկայությունը: Քաջ գիտակցում էր, որ նյութերի գրառումներն ու հրատարակությունը կաջակցեն ոչ միայն բանագիտությանը զբաղվողների մասնագիտական կողմնորոշմանը, այլև կօժանդակեն մշակութաբանների միջև տեսական ու գործնական կապերի ամրագրմանը: 1892 թ. Թիֆլիսում նա հրատարակում է «Ձավախքի բուրմունք» բանահյուսական ժողովածուն: Ի դեպ, նյութերի գրառման ընթացքում, որպես ուղեցույց, նա առաջնորդվել է Գր. Խալաթյանցի կազմած ծրագրով: Այդ առթիվ նա գրում է. «Մենք Ձավախքի մասին նյութերը հավաքել ենք 1889 թ. ամբողջ գավառը շրջելով, գրի առնելով միայն մեր տեսածն ու լսածը: Տեղի սղության պատճառով տարվա կարևորագույն տոների նկարագիրն ու գրչագրերի հիշատակարանները մնացին անտիպ: Սրա երկրորդ մասը՝ ժողովրդական բանաստեղծությունները, բառերի ու ոճերի ընդարձակ բաժնով, մոտ 300 երեսից բաղկացած, լույս կտեսնի առանձնապես մոտիկ ապագայում: Այս աշխատության մեջ մենք առաջնորդվել ենք պրոֆեսոր Գր. Խալաթյանցի կազմած ծրագրով, որ առաջարկում ենք մեր բանահավաքներին որպես մի «անհրաժեշտ ուղեցույց»²: 1895 թ. Շուշիում լույս է տեսնում «Ազգագրական հանդեսի» Ա գիրքը, որում հրատարակվել է «Ձավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար)» ժողովածուն:

Դրանում ընդգրկված են Ձավախքի տեղագրության, նշանավոր գյուղերից Կարծախի, Բարալեթի, Արագովայի, Մաթխայի, Սուլդայի, թրքաբնակ Մալումոյի բնակչության էթնիկական կազմի, տեղագրության վերաբերյալ ուշագրավ վկայություններ: Նշանակալից են հատկապես որոշ գյուղերի վերաբերյալ ժողովրդի մեջ լայն տարածում գտած տեղանվանական հետևյալ ստուգաբանությունները. «Արագովա գյուղը գտնվում է Ախալքալաքից դեպի հյուսիս 9,5 վերստ հեռավորությամբ համանուն գետի ափերին: Սա հնում բաղկացած է եղել Արա բերդից, որ կառուցված է եղել գետի ձախ ափին բարձրացող լեռան վրա և Գովա գյուղից, որ գտնվելիս է եղել բերդից դեպի հյուսիս, գետի աջ ա-

¹ Ե. Լալայան. Ձավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար). – «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), Թիֆլիս, 1913, էջ 3:

² Ե. Լալայան. Ձավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար). – ԱՀ, Ա գիրք, Շուշի, 1895, էջ 379:

փին: Այժմ այդ երկու անունները միանալով կազմել են Արագովա անունը»³: Մաթիսա գյուղի տեղանվան մասին գյուղացիները վկայում են. «Այս գյուղը եղել է մի ինչ որ Մաթո անունով աղայի, որի անունով է գյուղը կոչվել է Մաթիսա»⁴: Նա անդրադարձել է նաև Գուգարք նահանգի ինը գավառներից մեկի՝ Ջավախք անվան շուրջ պատմագրության մեջ շրջանառվող հետևյալ մեկնաբանություններին. «Ըստ Վախթանգ Ե թագավոր մատենագրի «Վրացվոց բարք» (Քարթլիս ցխեվորոբա) պատմության, այդ երկրամասը, այսինքն՝ Կուրի դաշտավայրը, Երուշտը և Փոցխով ու Տոր-Օղալի գետերի միջավայրը ժառանգություն է սրվել վրաց նախահայր Քարթլոսի որդի Սցխեթոսի Ջավախտս որդուն, որի անվամբ էր տեղավայրը Ջավախք է կոչվել: Ի. Շոպենը, առասպելական համարելով Ջավախտսին, Ջավախք անվան ծագումը պայմանավորում է ջավ (գարի) վրացերեն բառով, քանի որ երկրի բարձրության պատճառով ամենից լավ գարին այնտեղ է աճում»⁵: Ե. Լալայանը, անդրադառնալով ազգաբնակչության էթնիկական կազմին, նշում է. «Ախալքալաքի հիմնական բնակիչները հայեր են, հիմնականում էրզրումի վիլայեթի գաղթականներ: Կան և Արդահանի գավառի գաղթականներ, որոնք բնակվում են Խորենյա և Փոկա գյուղերում, իսկ դիլիֆցիները՝ Խնուսից: Շատ հետաքրքիր է սրանց գավառաբարբառի կրած փոփոխությունները Կարնո բարբառի ազդեցության տակ. ուստի են առաջ կրերեմ մի քանի երգեր և հեքիաթներ նրանց բարբառով: Ժողովրդի վարք ու բարքի, հավատի վերաբերյալ նյութերը ինքս հավաքել եմ գլխավորապես Կարնո գաղթականներից»⁶:

Ժողովածուում ընդգրկված են ոչ միայն ընտանեկան վարք ու բարքի, ծեսերի, հավատալիքների, ժողովրդական բժշկության, նշանավոր տոների (Նոր տարի, Սբ. Սարգիս, Բարեկենդան, Տեսառնդառաջ, Մեծ պաս) վերաբերյալ նյութեր, այլև բույսերի, կենդանիների, թռչունների, բախտի, ճակատագրի, «գարի ցկելու», «նետ դնելու», «փիլթա թափելու», երազի, տեսիլքի ու թո՛վշույթյան վերաբերյալ հավատալիքներ, ինչպես և երեխաների «պահապան հրեշտակների», «տաք հացի», «թոնրի շուրջ սավառնող բարի հրեշտակների» մասին պատմվող ավանդազրույցներ⁷:

Ժողովածուում «Ջավախքի բանավոր գրականությունը» խորագրի ներքո տպագրված է 177 քառյակ (վիճակի երգեր): □Ազգագրական հանդեսի□ Գ գրքում տողատակի նշումներից պարզվում է, որ 1–91 քառյակները Ե. Լալայանի գրառումներն են, իսկ 92–177-ը՝ Ջ. Ազնավուրյանին⁸:

Ե. Լալայանը ժողովածուում նաև անդրադարձել է Ախալցխայի ու Ալեքսանդրապոլ քաղաքի ու գյուղի երեխաների երկացանկում առկա ծածկալեզուներով հաղորդակցվելու սովորույթին: «Այս ծածկալեզուները,– գրում է Ե. Լալայանը,– նայելով իրենց բաղադրիչ մասնիկին, կոչվում են ըծեվար (ըծե-

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 61:

⁵ Նույն տեղում, էջ 379:

⁶ Նույն տեղում, էջ 173:

⁷ Նույն տեղում, էջ 321–356:

⁸ Ե. Լալայան. Ջավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար).– ԱՀ, Գ զիրք, Թիֆլիս, 1898, էջ 99–177:

րեն) – ըվեվար, ըլբեվար, ըխկեվար: Սրանց բոլորի գաղտնիքը նրանում է, որ բառի ամեն մի ձայնավորի առաջ ավելացնում են ծածկալեզուն կազմող մասնիկը. եթե ըծեվար՝ ըծ, ըվեվար՝ ըվ, ըլբեվար՝ ըլբ, ըխկեվար՝ ըխկ: Օրինակ՝ ըծարըծի ըծերթըծանք կրծարըծի, խըծաղըծանք: Ըվեվար – Ըվարըվի, ըվերթըվանք կըվարըվը խըվաղըվանք:

Ըլբեվար. ըլբարըլբի ըլբերթըլբանք կըլբարըբը խըլբաղըլբանք:

Ըխկեվար. ըխկարըխկի ըխկերթըխկանք կըխկարըխկը խըխկաղըխկանք⁹: Չորս տարբերակներն էլ նույն բովանդակությունն են արտահայտում. «Արի էրթանք կայը խաղանք»:

Ժողովածուում տեղ են գտել Զավախքում բնակվող հայերի, բոշաների, ռուսների, վրացիների, հույների, թուրքերի, քրդերի կենցաղասովորությանին տարաբնույթ կողմերը, վիճակագրական տեղեկություններ՝ Ախալքալաքի գավառի բնակիչների թվաքանակի վերաբերյալ ըստ 1886 թ. տվյալների:

Ե. Լալայանի գրառումներում առկա են հայ բոշաների մասին ավանդագրույցներ, որոնցից ստորև ներկայացնում ենք մեկ նմուշ: Այն, ի դեպ, նրանց կենցաղում առկա սովորույթների բանահյուսական արձագանքներից է: «Շատ վաղ ժամանակներում ապրում էր մի վարդապետ, որի երեք սարկավագները՝ կաշառվելով թշնամիներից, մի կին են բերում նրա խուցը: Երբ թշնամիները գալիս բռնում են վարդապետին կնոջ հետ, սա հասկանում է, որ սարկավագների խարդավանքն է և անիծում է նրանց՝ ասելով. «Սներեսներ, գնացեք, էլ մարդոց մեջ չերևաք»: Իսկույն սրանց երեսները սևանում է. առնում են մի-մի պարկ և գավազան ու գնում, անվերջ գնում: Ճանապարհին սրանց հանդիպում են ձի, կով, ոչխար և այլն, սակայն սրանցից ոչ մեկը չի մնում դրանց մոտ. միայն էջը հավատարմություն է ցույց տալիս և չի հեռանում տիրոջից: Սրանք վերցնում են էջը և գնում հասնում են մի անտառ, ճյուղերը կտրտում, քթոց, մաղ շինում, բայց որովհետև իրենց երեսի կեսը սևացած էր, չէին կարող մարդկանց մեջ մտնել, ուստի տալիս են իրենց կանանց՝ տանել՝ ծախելու: Այսպես շարունակվում է սրանց կյանքը. ամուսինները տանը նստած շինում են մաղ, բաթաթ, սյալա, քթոց և փոկ, իսկ կանայք ման են ածում քաղաքներ, գյուղեր ու վաճառում»¹⁰: Ե. Լալայանը կազմել և հրատարակել է բոշաների 387 բառից բաղկացած բառարանը՝ հայերեն թարգմանություններով¹¹: Բառարանը կազմելիս օգտվել է հետևյալ աղբյուրներից. 1. Պ. Ա. Մխիթարյանի ժողովածուն, 2. Անձամբ ժողոված բառերը, 3. կՈՅՍՈՎՏՉ, ԸՃՕՂՈՎՈ-ի մեջ գտնվող բառերը. Ա. Ն. Մարգարյանի «Տեղագրություն՝ ի Փոքր և ՝ ի Մեծ Հայս», Ճանիկյանի «Ակնայ հնությունը», Paspoti Etudee sur les tchiganes, P.josef jesina “Die rigeuner – sprache”¹²: Բոշաների նկատմամբ որոշակի վերաբերմունքի դրսևորումներ են հայերի մեջ լայն տարածում գտած հետևյալ առած-ասացվածքները. «Բոշի պես աներես», «Բոշի պես խուսքը ջիբն է», «Բոշան փաշա չի դառ-

⁹ Ե. Լալայան. Զավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար).– Երկեր, հ. I, Երևան, 1983, էջ 328:

¹⁰ Նույն տեղում, էջ 87:

¹¹ Ե. Լալայան. Զավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար).– ԱՀ, Դ գիրք, Թիֆլիս, 1898, էջ 261–270:

¹² Նույն տեղում, էջ 261:

նալ», «Բոշից քահանա չի լինի»¹³: «Փաստերը ապացուցում են, սակայն, – գրում է Ե. Լալայանը, – որ նրանցից դուրս են եկել ոչ միայն աշխարհահռչակ արտիստներ, հրապարակախոսներ, այլ նույնիսկ հայերի մեջ հայտնի կրոնավոր, հայտնի գիտնական Ալամդարյան վարդապետը, պրոֆ. Պատկանյանը. հայտնի գրողներից մի քանիսը բոշաներից են սերված, իսկ Եվրոպայում՝ գեղարվեստի պատմության մեջ տեղ բռնած հայտնի կին ջութակահար Պաննան (Աննա), ջութակահարների արքա Բիխարին, հռչակավոր նկարիչ Անտոնիո Սոլարին և այլն բոշաներից էին սերված: Այս բոլորը ապացուցանում է, որ բոշայական ազգը մի թարմ, ընդունակ հասարակություն է, որ երբ հաստատարական դառնա, երբ միջոցներ ունենա իր տնտեսական կյանքը ամուր հիմքերի վրա դնելու, հետևելու քաղաքակրթությանը, նա կարող է տալ մարդկության օգտակար անդամներ: Բսկ այս դրության մեջ չի անցնի մի 50 տարի ևս և ոչ միայն նրա ինքնատիպությունից, այլև նրա լեզվից ոչինչ չի մնա. նա կրնկճվի գորեղ հանգամանքների առաջ, չի ձուլվի, ոչ, բայց կոչնչանա, միայն մի պատմական հետք թողնելով իր ետևից, լոկ էթնոգրաֆիային հետաքրքրող մի հետք ...»¹⁴:

Ե. Լալայանի գրառումներում համաձույլ միասնությամբ մեկտեղվել են ազգագրական և բանահյուսական նյութերը: Նա քաջ գիտակցում էր, որ դրանք մեկը մյուսի լրացումն ու ամբողջացումն են: Հետագայում վաստակաշատ բանագետ Ա. Նազինյանը նման մտեցման կարևորության բարձր գիտակցմամբ գրում է. «Իր ազգագրական աշխատություններում նա (Ե. Լալայանը – Ս. Վ.) մեծ տեղ է հատկացնում բանահյուսական նյութերին, որոնք ոչ միայն լրացնում ու լուսաբանում են քննարկվող պատմաազգագրական շրջանի ընտանեկան բարքերն ու հավատալիքները, այլև հենց իրենք՝ բանահյուսական այդ ստեղծագործություններն էլ հասկանալի են դառնում ու պատճառաբանվում տվյալ համալիրի մեջ: Այդպիսիք են՝ ամուսնության, հարսանիքի, մահվան, թաղման, ծննդյան, ավանդական տոնակատարությունների հետ կապված ծիսական երգերը, պատմական տեղանուններին, իրադարձություններին, դեպքերին վերաբերող, ինչպես նաև բնական տարրերի՝ ջրի, կրակի նաև հավատալիքների ու նախապաշարմունքների հետ կապված ավանդություններն ու առասպելական գրույցները, փոքր ժանրերի նմուշները՝ առած-ասացվածքներ, օրհնանքներ, որոնք, չնայած հարևանցի և օգտակար բնույթին, ուշագրավ հարցեր են պարզում»¹⁵:

«Ջավախք» ժողովածուում Ե. Լալայանն ընդգրկել է նաև որոշ երգերի՝ «Քեզի մեռնեմ Էջմիածին», «Զիւ վզի վզնոց կիտամ, դե, խանե ծամթելն ի ծովեն», «Յար ունիւ, յարս օխտնաղ բար ունի», «Վարդ կոշիկս, վարդ կոշիկս», «Ծառիս տակը մանիշակ, ջան գյուլում, ջան, ջան» բնագրերը՝ նոտագրված Կարա Մուրզայի կողմից: Նկատենք, 1911 թ. Ե. Լալայանը Ալեքսանդրապոլում հրատարակել է «Պատավաշունչ» վերնագրով ժողովածուն, որում ընդգրկված է Ջավախքից գրառված 4 հեքիաթ:

¹³ Նույն տեղում, էջ 217:

¹⁴ Նույն տեղում, էջ 259:

¹⁵ Ե. Լալայան. Երկեր, հ. I, էջ 18:

Ե. Լալայանն իր «Ձավախքի բուրմունք» ժողովածուում ընդգրկել է մասնավորապես բանաձևային, քնարական ու վիպական բնույթի ստեղծագործություններ (աղոթքներ, երգեր, ավանդություններ): Նյութերը տեղադրելիս նա առաջնորդվել է թեմատիկ տեղաբաշխման սկզբունքով՝ ընդունելով իր իսկ գրառումների տարածանք բնույթը:

1. «Առողջություն և հիվանդություն» խորագրի ներքո ընդգրկել է հիմնականում աղոթքները. 1. «Ծննդկանի» (5 միավոր), «Աչից հատի» (2 միավոր), «Մսահանգուստի» (4 միավոր), «Թիքի» (1 միավոր), «Մոջրմուկի» (1 միավոր), «Հիվանդի վրա» (1 միավոր):

2. «Առօրյա կյանք» «Քնից զարթնելիս» (3 միավոր), «Անկողին մտնելիս» (10 միավոր), «Տղան լողացնելիս» (1 միավոր), «Հաց եփելիս» (1 միավոր), «Խնոցի հարելիս» (1 միավոր), «Գելկապի» (4 միավոր), «Ղուռը փակելիս» (3 միավոր):

3. «Հանրային հարաբերություններ. 1. «Չար աչքի» (11 միավոր), «Վախի» (2 միավոր), «Չար դրկցից ազատվելու» (1 միավոր), «Անօրեն մարդկանցից ազատվելու» (1 միավոր):

4. «Երգեր»՝ 1. «Միրո երգեր» (13 միավոր), «Պարերգեր» (7 միավոր), «Հարսանյաց երգեր» (5 միավոր), «Ընտանեկան երգեր» (9 միավոր):

5. «Մահերգեր» 3 միավոր

6. «Պանդխտության երգեր» 8 միավոր

7. «Երկրագործի երգեր» 4 միավոր

8. «Երգիծական, ծաղրաշարժ երգեր» 10 միավոր, որոնցում ընդգրկված են նաև անձնանուններին նվիրված համահնչուն վերջավորություններով 43 միավոր երգ: Առավել տեսանելի դարձնելու նպատակով ներկայացնում ենք հիշյալ երգերից մեկ նմուշ.

Ախչի, անունդ Գարան,
Քեզ տեսնող մանչերը մարան,
Ափսոս եկան քեզի տարան,
Սապապն էղավ մերոնց Սոնան¹⁶:

Ժողովածուի վիպական բաժնում «Ավանդությունները» ներկայացնելիս, Ե. Լալայանն առաջնորդվել է բնագրերի բովանդակային դասակարգման սկզբունքով: Ըստ բնույթի դրանք բաժանել է հետևյալ խմբերի.

1. կրոնական (8 միավոր) «Եղիա մարգարեի արցունքը», «Եղիան Ղաֆաֆչի», «Քրիստոսը պոյանու աշկերտ», «Ձավահիր կռած օրանը», «Սողոմոն իմաստուն ու քոռ բուֆը», «Վայյան հավք», «Լեկեոն ձուկ», «Թյություն»:

2. Կերպարանափոխություն (7 միավոր). «Նոյ Նահապետի աղջիկները», «Փեթակ», «Մկներ և կատու», «Լու», «Լոխմանի», «Լոխմանու աշկերտները», «Լոխմանու մահը»:

3. Պատմական (10 միավոր). «Պապ և Մեծն Ներսես», «Պապի անիծվիլը», «Կայթ քար», «Օռլորություն սուրբը», «Կուռնալեթու Ս. Գրիգոր ավետարանը», «Վարզիա վանքին եսիրները», «Ս. Արիստակեսի վարած ակոսները», «Հակոբ պատրիարք», «Թմբկաբերդի առումը», «Օհան Օձնեցի»:

¹⁶ Նույն տեղում, էջ 385:

4. Տեղագրական (5 միավոր). «Ախալցխու բերթին շինութենը», «Բինգյոլ» (2 տարբերակ), «Վարգիու շինվիլը», «Չոպնի կարմունջը»:

Հիշյալ աշխատության վերջում Ե. Լալայանն ընդգրկել է նաև «Հարս ու կեսուր», «Աղքատ Սհակ» կենցաղապատում գրույցները:

Ե. Լալայանը կարևորել է բնագրերին կից՝ տեղեկատվական աղբյուրների անհրաժեշտությունը: Այսպես, «Հանրային հարաբերություններ» խորագրի ներքո ընդգրկված «Վախի» 2-րդ տարբերակի տողատակում գրում է.

Քրիստոս ու ըն է,
Տակը մսուր է,
Գլխատակը տաշեղ է,
Այրն բարի է,
Վախեցածը սուր է,
Կնիկը չար է,
Քարդանը խոռ է,
Միջինը մարխոջ է,
Գտալը պոչչիկ է,
Երկնավոր թագավորս փրկութեն կուտա,
Այս տղայիս սիրտը տեղը, լերդը՝ փորը:

«Քրիստոս՝ ծերունի աղքատի կերպարանքով ողորմություն է խնդրում: Մի մարդ, երեկոյան տանում է նրան յուր տունը՝ գիշերելու, սակայն կինը չի հոժարում: Ամուսինը՝ անճարացած, առաջարկում է ծերունուն պատկել մսուրում և բարձի տեղ տաշեղ դնել գլխի տակ: Ընթրիքին մարդը կամենում է ծերունուն իրենց սեղանակից առնել, սակայն կինը ոչ միայն թույլ չի տալիս, այլ իրենց համար պատրաստած կերակուրներից էլ նրան բաժին չի հանում. մի կոտրած քարդանի մեջ (կավե աման) լցնում է թթու թան, պոչչիկ (պոչի կեսը կոտրված) գդալը ձգում է մեջը և տալիս նրան՝ ուտելու: Բայց հենց որ պատկում են, երեխան սաստիկ վախից մինչև լույս գոչում և լալիս է: Երբ ոչ մի հնարքով չեն կարողանում երեխայի լացը կտրել, հայրը հարցնում է ծերունի աղքատին, թե մի աղոթքով չի՞ կարող լավացնել երեխային: Նա էլ էս աղոթքն է ասում ու լավացնում»¹⁷:

«Ընտանեկան երգեր»-ի տակ զետեղված, «Ինձի առավ տուման փուսը» երգի տողատակում գրում է. «Արութը առաջարկում է յուր Մարիամ կնոջը թողնել կորիսեցի սիրականին և վերադառնալ յուր հետ միասին ապրել և երբ չի համաձայնվում, անհծում է.

Աչք ունենաս, քուն չունենաս,
Խթման օրը եղ չունենաս,
Արտ ունենաս, բուս չունենաս,
Ակ ունենաս, խուս չունենաս»¹⁸:

¹⁷ Նույն տեղում, էջ 350:

¹⁸ Նույն տեղում, էջ 370:

«Մահերգեր»-ին կից ,Էս գիշեր էրագս Քերոփը տեսա» երգի տողատակում նշված է. «Հորինել է Ղուռի դատելցի անգրագետ Մարգիս Գյուլպանկյանը յուր եղբոր՝ Քերոփի վրա: Մա 1887 թ. մի դաշույն է գողացել Շմավոն անունով մի երիտասարդից. գողությունը բացվում է, Շմավոնը դաշույնը ետ է ստանում, սակայն դիս պահելով՝ հունիս ամսին, հարսանյաց տանից Քերոփին խաբելով տանում է դաշտ և յուր ընկերների օգնությամբ սպանում է: Չարագործները բանտարկվում են»¹⁹:

«Կերպարանափոխություն» խորագրի ներքո «Փեթակը» ավանդազրույցին կից գրում է. «Կարծախի երեսփոխ Մարգիս Հովհաննիսյանը, մեղք համարելով Հովր Երանելու հիշատակը ծախել, 12 տարուց ի վեր յուր փեթակների մոտը նվիրում է եկեղեցուն: Այսպես անում են և ուրիշները»²⁰:

«Կաթ քար» ավանդազրույցի տողատակում էլ գրում է. «Այս ավանդությունը պատմվում է Մոնրճախեթի գերեզմանոցում կանգնած մի քարի մասին, որ 5 արշին երկարություն, 1,5 արշին լայնություն և 1 արշին հաստություն ունի: Սորա արևմուտք դարձրած երեսի վրա նկատելի է մի կնոջ պատկեր: Մինչև այսօր կաթ չունեցող կանայք գալիս են այդտեղ ուխտ. երեխան դնում են կաթ քարի առջև, քարի պատերի վրա քսում են կարագ, յուղ և իրենք քարի առաջ աղոթում, որ սուրբը՝ երեխայի լացից գալով շատացնի մոր կաթը: Ուխտը ընդունելի է լինում, երբ «սուրբի քրտինքը»՝ կարագը հալվում է»²¹:

Ե. Լալայանի «Ձավախք» ժողովածուն բարձր է գնահատվել ժամանակակիցների կողմից: Հ. Թորոսյանը գրում է. «Հայտնում ենք հարգելի հրատարակչին մեր ուրախությունը, մեր համակրանաց ջերմ զգացմունքները փոխանակ այս անգին ծառայության՝ գոր կմատուցանե մեր ազգայինը իրեն հանդեսի տեսքով»²²: Ըստ Հ. Մեղավորյանի՝ «Ազգագրական հանդես»-ի երևալը մեր պարբերական մամուլի աննախանձելի ասպարեզում մի նշանավոր երևույթ է և մեր սրտին շատ մոտ»²³: Մանկավարժ, գրաքննադատ Գ. Վանցյանը գրել է. «Հանդեսի ծուծն ու էությունն է «Ձավախք» ինքնուրույն ժողովրդական հավաքածուն, որ յուր առատ, բազմակողմանի նյութերով մի ահագին գանձ է հայ ազգագրության համար»²⁴: Եղել են նաև թերահավատներ, կատարվող գործի կարևորությունը չգիտակցող անհատներ: Ե. Լալայանն այդ առթիվ գրում է. «Ըստ նրանց, մեր ուժերից վեր գործ ենք սկսել և մեր «Ա» գրքով չենք իրագործել մեր նպատակը»: Իր սկսած գործի կարևորության բարձր գիտակցմամբ, նա համեստաբար պատասխանում է. «Մենք լուրջ դիտավորություններով և մասնագիտաբար աշխատելու տենդով ասպարեզ ենք եկել և մեր այս հրատարակությունը լոկ փորձ է ի մի խմբելու մեր մասնագետներին, ընդհանուր ուժերով մի գեղեցիկ գործ կատարելու: Եթե սիրով ընդունեն այդ հրավերը հայ մասնագետները, այն ժամանակ կունենանք մի ազգագրական ընկերություն և

¹⁹ Նույն տեղում, էջ 377:

²⁰ Նույն տեղում, էջ 393:

²¹ Նույն տեղում, էջ 400:

²² Հ. Թորոսյան. Գրախոսական ակնարկ. «Բազմավեպ» (Վենետիկ), 1900, - 3, էջ 370:

²³ Տե՛ս «Մուրճ» (Թիֆլիս), 1890, - 3-4, էջ 463:

²⁴ Տե՛ս «Մուրճ», 1896, - 5, էջ 635:

նրա օրգանը, որ անհամեմատ բարձր կլինի այժմյան փորձերից և վստահ ենք լինելի՞ն կհամապատասխանի յուր կոչմանը, իսկ եթե ոչ, առանց ուրիշների աղմուկների էլ, ինքն իրեն կանգ կառնի: Խնդրում ենք մասնագետներին հաճիլ միահամուռ ուժերով փրկելու գոնե այն մնացորդները, որոնք կարճ միջոցում արդեն կարող են բոլորովին անհետանալ: Ինչքան էլ, որ քիչ բան փրկենք, այնուամենայնիվ ծառայած կլինենք գործին»²⁵:

Ե. Լալայանի լավատեսությունն ունեցավ իր բարի հետևանքները: Համառ ջանքերով նա 20 երկար ու ձիգ տարիների ընթացքում հրատարակել է «Ազգագրական հանդեսի» 26 հատոր, որոնցում ընդգրկված նյութերը, իբրև կարևոր սկզբնաղբյուրներ, մինչ օրս չեն կորցրել իրենց արդիականությունն ու կարևորությունը:

ФОЛЬКЛОРНАЯ ТРАДИЦИЯ ДЖАВАХКА
В ЗАПИСЯХ ЕРВАНДА ЛАЛАЯНА
(К 150-летию со дня рождения)

СВЕТЛАНА ВАРДАНЫАН

Р е з ю м е

Сборник «Джавахк (материалы для будущих исследований)» знаменитого народоведа, фольклориста Е. Лалаяна является весомым вкладом в историю армянской культуры. Вошедшие в него многожанровые фольклорные и этнографические материалы и по сей день не потеряли актуальности. Они представляют собой надежные первоисточники для всестороннего исследования фольклорной традиции Джавахка.

THE FOLKLORE CULTURE OF JAVAKHK IN THE RECORDS
OF YERVAND LALAYAN
(To the 150th birth anniversary)

SVETLANA VARDANYAN

S u m m a r y

The volume “Javakhk” (materials for further studies) of the famous ethnographer, folklorist Ye. Lalayan is an important contribution to the history of Armenian culture, as it contains comprehensive folk and ethnographic materials. The multi-genre folk materials, which are included in the volume, are applicable up to now. These are also reliable sources for comprehensive study of folk culture of the above-mentioned region.

²⁵ Ե. Լալայան. Ջավախք (նյութեր ապագա ուսումնասիրության համար).– ԱՀ, Բ հրրք, Թիֆլիս, 1897, էջ 380: